ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԵՑ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ

Հուլիսի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ գումարվեց Գերագույն Հոգեւոր Խորհրդի ժողով:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով: Ողջունելով ժողովականներին՝ Նորին Սրբությունն իր օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց ներկաներին՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն բերած իրենց նախանձախնդիր ծառայության համար: Վեհափառ Հայրապետն իր խոսքում ցավ հայտնեց Մայր Աթոռի երիցագույն միաբան հանգուցյալ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի կորստի համար եւ հրավիրեց ժողովականներին՝ աղոթելու Սրբազան Հոր հոգու հանգստության համար: Մինչ օրակարգին անցնելը ԳՀԽ անդամներին ներկայացվեց նախորդ ժողովի արձանագրությունը, ապա ժողովն սկսեց օրակարգի հարցերի քննարկումները:

Եպիսկոպոսաց առաջիկա ժողովի նախապատրաստական աշխատանքների մասին զեկուցեց ԱՄՆ Հայոց արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը: Քննարկումներից հետո որոշվեց եպիսկոպոսաց ժողով գումարել հաջորդ տարի՝ քննության առնելու համար Հայ Եկեղեցու հոգեւոր, ծիսական, կանոնական եւ վարչական մի շարք կարեւոր խնդիրներ:

ԳՀԽ-ն անդրադարձավ նաեւ այս տարվա հոկտեմբերի 30-ից մինչեւ նոյեմբերի 4-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հրավիրվելիք թեմական ներկայացուցչական ժողովի օրակարգին: Որոշվեց թեմական ներկայացուցչական ժողովի հաստատմանը ներկայացնել ԳՀԽ նախորդ նիստում հաստատված Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու թեմական եւ ծխական կանոնադրությունները:

Ժողովն անդրադարձավ նաեւ Հայ Առաքելական Եկեղեցու հոգեւոր քարոզչական գործունեությանը եւ որոշեց հիմնել քարոզչական կենտրոն՝ Հայ Եկեղեցու քարոզչական առաքելությունն առավել արդյունավետ իրականացնելու համար:

Վեհափառ Հայրապետը ԳՀԽ անդամներին ներկայացրեց ընթացիկ ամսին տեղի ունեցած Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Ա Պատրիարքի հետ հանդիպման մանրամասները՝ գոհունակությամբ անդրադառնալով երկու եկեղեցիների միջեւ առկա եղբայրական եւ ջերմ հարաբերություններին: Նորին Սրբությունը տեղեկացրեց, որ այսուհետ եւս պիտի շարունակվի աստվածաբանական երկխոսությունը Հայ Առաքելական Եկեղեցու եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու միջեւ, ինչպես նաեւ տեղեկացրեց, որ Կիրիլ Ա Պատրիարքի միջնորդությամբ շարունակվելու են մոսկովյան եռակողմ հանդիպումները՝ Հայ Առաքելական, Ռուս Ուղղափառ Եկեղեցիների եւ Ադրբեջանի մուսուլմանների առաջնորդի միջեւ՝ ի խնդիր ԼՂՀ խաղաղ կարգավորման գործընթացի:

Ժողովի ընթացքում քննարկվեցին նաեւ Արեւմտյան եւ Կենտրոնական Եւրոպայի Հայրապետական պատվիրակություններին առնչվող կանոնական, կազմակերպչական, ինչպես նաեւ ներեկեղեցական խնդիրներ: